



ՀՀ ԲՆԱԿԱՆՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<< ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> Պ Ո Ա Կ

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РА

Г Н О "ЦЕНТР ЭКСПЕРТИЗЫ ПО ВОЗДЕЙСТВИИ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ"

MINISTRY OF NATURE PROTECTION OF RA

"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" S N C O

- 375012, Երևան, Կոմիտաս 29,
- 375012 г. Ереван, пр. Комитаса 29,
- 29 Komitas Ave., Yerevan, 375012
- www.mnpexpertise@bk.ru

Հեռ. (374 010/011)220-218

Тел. (374 010/011) 220-218

Tel (374 010/011)220-218

ՎՄ-32/511

«29» 08 2017թ

Հայկական բնապահպանական ճակատ (ՀԲՃ)
քաղաքացիական նախաձեռնության կոնտակտային անձ
պարոն Լևոն Գալստյանին

Հարգելի պարոն Գալստյան

Ի պատասխան Ձեր 2017թ օգոստոսի 4-ի գրության, կապված Ամուլսարի ոսկեբեր քվարցիդների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի վերաբերյալ հարցադրումների հետ, ներկայացնում եմ պատասխան հիմնավորումները:


Միջազգային փորձագիտական կազմակերպությունների կողմից իրականացված Ամուլսարի ոսկեբեր քվարցիդների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի էկոլոգիական ռիսկերի վերաբերյալ ուսումնասիրությունների, վերլուծությունների և եզրահանգումների հիման վրա Ձեր կողմից՝ ՀՀ բնապահպանության նախարարությանը ներկայացվել է պահանջ՝ ՀՀ Ամուլսարի ոսկեբեր քվարցիդների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի վերաբերյալ տրամադրված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչել: Պահանջի համար, հիմք է հանդիսացել ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ Օրենք/ 21-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, որով ամրագրված է, որ փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու հիմք է հանդիսանում փորձաքննական եզրակացություն տալուց հետո ի հայտ եկած էկոլոգիական նոր գործոնները:

Ձեր կողմից էկոլոգիական նոր գործոն է համարվել միջազգային անկախ փորձագետների ուսումնասիրությունները, դրանցում կատարված հայտնաբերումները, եզրահանգումները, սակայն, դրանք չեն կարող դիտվել որպես էկոլոգիական նոր գործոն, քանի որ ներկայացված էկոլոգիական բոլոր գործոնները, առկա են եղել ՀՀ Ամուլսարի ոսկեբեր քվարցիդների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի փաստաթղթային փաթեթը>> մշակելիս, և այն ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնելիս: Ուստի ներկայացված փաստարկների հիման վրա հնարավոր չէ փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչել:

Համաձայն Օրենքի 18-րդ հոդվածի, 2-րդ մասի 11-րդ կետի՝ Ամուլսարի ոսկու ծրագրով, բնապահպանական կառավարման պլանով, ՇՄԱԳ հաշվետվությունով, նախատեսված է շրջակա միջավայրի, այդ թվում ջրային ռեսուրսների մանրամասն մշտադիտարկումների իրականացման և հետնախազծային վերլուծության ծրագրի կազմում: Մոնիթորինգի և հետնախազծային վերլուծության ընթացքում կիրականացվեն լրացուցիչ ուսումնասիրություններ, վերլուծություններ, կնախատեսվեն համախառնասխան միջոցառումներ:

Ձեր էլեկտրոնային փոստին եմ ուղարկում <<Լիդիան Արմենիա>> ՓԲԸ կողմից ՀՀ բնապահպանության նախարարին ներկայացված Blue Minerals Consultancy, Clear Coast Consulting և Buka Environmental[1], ընկերությունների զեկույցների գնահատականների և հարցադրումների վերաբերյալ պատասխան հիմնավորումները (72 թերթ), որոնք անդրադառնում են Ամուլսարի Ծրագրի շրջանակներում թթվային ապարների դրենաժի (ԹԱԴ) հավանական ռիսկին և ստորգետնյա և մակերևութային ջրերի հետ կապված հարցերին, ինչպես նաև Լիդիանի կողմից առաջարկվող մեղմացման միջոցառումներին: Միաժամանակ <<Լիդիան Արմենիա>> ՓԲԸ պատրաստ է զեկույցների հեղինակների հետ հետագա քննարկումներին մասնակցելու և բաց է շահագրգիռ բոլոր կողմերի հետ շարունակական թափանցիկ երկխոսության համար:

Տնօրեն՝



Վ. Սահակյան